

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1922

01 MAR 2000

ՊՐՈԼԵՏԱՐԻ

յեկաների, միացել

05 FEB 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՌՈՎԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ)



342
- 25

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
6 ԽԵԿԴ Ա-1922.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՎԻԴԱՑԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԾԽՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔ)

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Դահագործվող յեմ աժխատավոր ժողովրդի իշխանության
նիմնական սկզբունքները

1. Հայաստանի ապատամբ բանվորների և աշխատավոր դյու-
տացիների կամքով Հայաստանը 1920 թ. նոյեմբերի 29-ին հայտա-
րարված և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկա-
նում է բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատ-
գամավորական խորհուրդներին:

2. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետու-
թյան (Հ. Ս. Խ. Հ.) սահմաններում բոլոր աշխատավորները առանց
ողջի և դավանանքի խորության վայելում են հավասար իրա-
վունքներ:

3. Սոցիալական կյանքի միակ հիմք ընդունելով աշխատանքը
և բոլոր արժեքների ստեղծագործող նկատելով աշխատավորը, աշ-
խատանքը պարտազիր և հայտարարվում Հ. Ս. Խ. քաղաքացի-
ների համար, նշանաբան ունենալով՝ «Ով չի աշխատի—նա չի ու ափ»:

4. Հանդիսանալով միջազգային սոցիալիստական հեղափոխու-
թյան մի հատվածը և կոչումն ունենալով վերջ տալ կապիտալիս-
տական կարգերին ու վերացնել մերժկային աշխատանքի ամեն
տեսակ շահուգործում—Հ. Ս. Խ. Հ. բանվորների և աշխատավոր-
ների իշխանությունը»:

ա. Վերացված և հայտարարում հողի մասնավոր սեփականու-
թյունը Հ. Ս. Խ. սահմաններում, արտագրավում և պետական սե-
փականություն և ճանաչում ամբողջ հողը բոլոր ջրերոց ու անտառ-
ներով, այլ և մասնախրական ու կրնական հաստատությունների
շարժական ու անշարժ գույքը, և ձրիաբար մշակելու համար առվիս
աշխատավորներին, նրանց կողեկտիվներին ու խորհրդային անհա-
ռություններին:



Կ 6 0 4 - 5 0

ր. Արտադրավում և պետականացնում ե յերկաթուղին, բանակերը և ընդհանրապես խոշոր արտադրության բոլոր միջոցները, ոյս ամենի կառավարությունն ու շահագործումը վերապահելով խորհրդային որդաններին կամ արտադրական միավորներին:

Մանրություն.—Մասնավոր նախաձեռնության վերապահնված շրջանակը վարչվում և ընթացիկ որենսգրությամբ:

5. Բանվորների և աշխատավոր գյուղացիների հեղափոխական դիլատառությի իրականացման նպատակով՝

ա. Բշխանությունը ամբողջովին և բացառապես վերապահնվում է բանվորներին ու գյուղացիներին և նրանց ընտրած մարմիններին:

բ. Շահագործող գասակարգերը զրկվում են ընդհանրապես քաղաքական իրավունքներից և հատկապես քաղաքական պաշտոնակարության իրավունքից:

6. Աշխատավորների քաղաքացիական գաստիարակության, մասավոր քարայական ազատազրության և գասակարգացին կազմակերպության նպատակով՝

ա. Յեկեղեցին անջատվում է պետությունից, վերածվելով հավատացյալների մամավոր համայնքի, և գալրոց՝ յեկեղեցուց: Բոլոր քաղաքացիներին իրավունք և արվում ազատութեն վարել կրօնական և հակալիքնական պրոպագանդ: Դարձոցը գառնում է սոցիալիստական գասակարակության որպես՝ կիրառելով արտադրական աշխատանքը վորովեն կրթության միջոց:

բ. Հ. Ա. Խ. Հ. աշխատավորներին իրավես խոսքի ազատություն և մամուլի անկախություն ապահովելու համար նրանց տրամադրվում են նյութական, տեխնիքական և այլ ամեն տեսակ միջոցներ:

գ. Հ. Ա. Խ. Հ. աշխատավորներին իրավես ժողովների, միութենդների, ցույցերի և այլ համախմբությունների ազատություն ապահովելու համար նրանց տրամադրվում են ժողովատեղիներին կամ կառավարություն և վարչություն և այլ տեսակի լիազորություն և վառելիք:

դ. Հ. Ա. Խ. Հ. աշխատավորներին իրավես միությունների ազատություն ապահովելու համար բանվոր գասակարգին և գյուղացիության լիազոր արվում են նյութական և այլ տեսակի իրավան միջոցներ:

ե. Հ. Ա. Խ. Հ. աշխատավորներին իրավես գիտություն ստանալու գործը ապահովելու համար բանվոր գասակարգին և գյուղացիությանը արվում են լիակատար, բազմակողմանի և ձրի կրթության բոլոր նախավորությունները:

շ. Պաշտամաներով միջազգացին սոցիալիստական հեղափոխու-

թյուն շահերը և բոլոր յերկրների ու ժողովուրդների աշխատավորների համերաշխության զաղափարը՝

ա. Հ. Ա. Խ. Հ. սահմաններում ապրող բոլոր ուսարերկացի աշխատավորներին տրվում է քաղաքացիության իրավունք:

ե. բ. Քաղական ու կրօնական հալածանքի յենթակա բոլոր սահշարերկացիներին—ապահովություն և պաշտպանություն:

8. Վերացված են համարվում Հայաստանի նախկին կառավարությունների կնքած բոլոր միջազգացին դաշինքները, վճռականորեն մերժվում ե զորեւ աղքային-հարձակողական քաղաքական թյուն հարեւան յերկրների ու ժողովուրդների վերաբերմամբ, վերջ և արվում զաղանի դիվանագիտության և հաստատվում ու ամրապնդվում ե հարեւանների հետ բարեկամական զրացիություն:

9. Բանվորների և չուներ գյուղացիների գասակարգացին-հեղափոխական զիկատառության ապահովելու և արտաքին ու ներքին հականեղափոխությունից պաշտպանելու նպատակով կազմվում է Հ. Ա. Խ. Հ. Կարմիր Բանակը, բոլորի համար սպարտագիր գարձընելով զինվորական ծառայությունը: Սոցիալիստական հայրենիքը զենքով պաշտպանելու պատվագոր իրավունքն ու կոչումը թողնելով միայն աշխատավորներին՝ չաշխատող տարրերի վրա դրվում են սպամական այլ պարտականություններ:

10. Բուրժուական իրավակարգն ու արդարադատությունն արմատախիլ անելու և պրոլետարիատի ու ազբատ գյուղացիության զիկատառության սահմաններու և պաշտպանելու համար՝ վերացվում են հականեղափոխական նախկին կառավարությունների բոլոր որևէնքներն ու գատարանները և փոխարենը՝

ա. Բանվորա-գյուղացիական իրավունքի ազրյուր ձանաչվում է իրարհրդացին որենսգրությունը, սոցիալիստական իրավահայեցագությունը և հեղափոխական խիզձը:

բ. Արդարադատության հիմք ընդունվում է միասնական ժողովքական զատարանը՝ հիմնված աշխատավոր մասսաների գասուկարգային կազմակերպությունների վրա, միաժամանակ ձանաշերով պատակար արդարադատության անհրաժեշտությունը բանվորացյուղացիական հեղափոխության գերագույն շահերի պաշտպանության համար:

11. Բանվորների և աշխատավոր գյուղացիների գասակարգացին զիկատառության, վոր կոչումն ունի վերջ տալ կապիտալիստական հանրակարգին և հեղափոխական գոխարկմամբ իրականանել սոցիալիզմը—վերջ և տալու նայե գասակարգերի գոյության,

Հետեաբար ամեն տեսակի գիկատառերայի, այլ և քաղաքական իշխանության, փոք ծնունդ ու արտահայտություն և դասակարգերի տիրապետության:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀԻՄԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ:

Կենտրոնական իշխանություն

ա. Հայաստանի Բանվորների, Գյուղացիների յեզ Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհուրդների Համագումար

12. չ. Ա. Խ. Հ. Բարձրագույն իշխանությունը հանդիսանում է Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվորների Պատգամավորական Խորհուրդների Համագումարը:

13. Հայաստանի Խորհուրդների Համագումարը կազմում է Խորհուրդների գովառական համագումարներից ընտրված պատգամավորները, ըստ փորում 5,000 բնակիչ տակաս և մի ներկայացուցիչ, սակայն համագումարի ամբողջ կազմը լինելու յե վոչ պահի քան յերեք հարյուր հոգի:

14. Հայաստանի Խորհուրդների ներթական համագումարը հրավիրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեն տարեկան մի անգամ:

15. Հայաստանի Խորհուրդների արտակարգ համագումար հրավիրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իր անմիջական նախաձեռնությամբ և կամ Հանրապետության ազգարնակության 1/5-ից վոչ պահաս մասն ընդդրկող վայրերի գավառական խորհուրդների պահանջով:

16. Հայաստանի Խորհուրդների Համագումարը ընտրում է չ. Ա. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտե վոչ պահաս քան 75 անդամով, փոք և պատասխանատու ու հաշվետու յե Հայաստանի Խորհուրդների Համագումարի տառաջ:

թ. Կենտրոնական Գործադիր Կոմիտե

17. Հայաստանի Խորհուրդների մի համագումարից մինչ մյուսը Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հանդիսանում է չ. Ա. Խ. Հ. որենսդիր, Կարգադիր և զեկագարաժերնուկան բարձրագույն իշխանությունը:

18. Համագումարի քաղաքական և սոցիալական հարցերը առանձանագործ գեկրեաների ու վորոշումների նախադերը, այլ և

առագման ու արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրները ընդունության են առնվազաւ և հաստատվում Կենտրոնական Գործադիր Կոմիտեյում:

19. Կենտրոնական Գործադիր Կոմիտենի նախագահության մի ջոցով չորս ամիսը մի անգամ հրավիրում է ներթական նախաշրը ջան հրավիրում և նախագահությունը իր անմիջական նախաձեռնությամբ, կամ Փողովրդական Կոմիտարների Խորհրդի առաջարկությամբ և կամ թե՛ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամների ոչ պակաս քան 1/2-ի պահանջնո՞վ:

20. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի արտակարգ նստաշրը ջան հրավիրում և նախագահությունը իր անմիջական նախաձեռնությամբ, կամ Փողովրդական Կոմիտարների Խորհրդի առաջարկությամբ և կամ թե՛ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամների ոչ պակաս քան 1/2-ի պահանջնո՞վ:

21. Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, հրավիրելով Հայաստանի Խորհուրդների Համագումար, տալիս և նրան իր գործունեցության հաշվով, և զեկուցումներ ներկայացնում ընդհանուր քաղաքականության և տռանձին հարցերի մասին:

22. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի բոլոր անդամներն աշխատում են կառավարական հիմնարկներում, կատարում են ընդհանրապես խորհրդացին պաշտոն կենտրոնում կամ տեղերում:

23. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամներին պատասխանատվության յենթարկել, նրանց մոտ խուզարկություն կատարել և նրանց ձերբակալել կարելի յե միայն Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կանխական համաձայնությամբ:

24. Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընտրում է նախագահություն և Հանրապետության գործերի ընդհանուր կառավարությունն համար կազմում Փողովրդական Կոմիտարների Խորհուրդը:

ԳԼՈՒԽ ՅԵՐԲՐՈՐԴ

ԺԱՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՐԵՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

25. Փողովրդական Կոմիտարների Խորհրդի իրավասության ե յենթարկած չ. Ա. Խ. Հ. գործերի ընդհանուր կառավարությունը և ընթացիկ որենսդրությունը:

26. Փողովրդական Կոմիտարների Խորհուրդը իր իրավասության սահմաններում հրատարակում է զեկրեաներ, վորոշումներ, հրահանդներ և ընդհանրապես ձեռք և առնում բոլոր անհրաժեշտ միջոցները պետական էյանքի կանոնագործ և արագ ընթացքը ապահովելու համար:

27. Փողովրդական Կոմիտարների Խորհուրդը իր բոլոր վորոշումների և վճառների մասին անհապաղ տեղեկացնում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության:

28. Փողովրդական Կոմիտարների Խորհրդի բոլոր այն զեկրեաների և վորոշումների նախագահերը, վոր համագետական խոշոր նշանակություն և ընդհանուր քաղաքական կարելորություն ունին —

ներկայացվում են Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քննության հաստատության:

29. Անհետածգելի կատարումն պահանջող դեկրետներն ու գորշումները կարող են ի կատար ածվել ժողովրդական Կոմիտարների Խորհրդի անմիջապես:

30. Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իրավունքունի բեկանել և առկայել ժողովրդական Կոմիտարների Խորհրդի ամեն մի դեկրետ և գորշում:

31. Ա. Ա. Հ. Ժ. Ժողովրդական Կոմիտարիատներն են.

ա. Արտաքին Գործերի

բ. Ներքին Գործերի

շ. Արդարադատության

դ. Ժողովրդական Լուսավորության

ե. Բազմական

զ. Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհուրդ

է. Հողագործության

ը. Ֆինանսների

թ. Պարհնտագործության

ժ. Արտաքին Առևտուրի

ժա. Սոցիալական Ազանովության

ժի. Փոստ-Հեռագրական

ժգ. Առողջապահության

ժդ. Բանվորա-Գյուղացիական Տեսչության

ժե. Աշխատանքի և

ժդ. Ճանապարհների Հաղորդակցության

32. Յուրաքանչյուր ժողովրդական Կոմիտարիատն կից կազմվում ե կոլեգիա, վորի անդամներին հաստատում ե ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը:

33. Ժողովրդական Կոմիտարը իրավասու յե միանձնյալ վարչեք Խարցերը և գործադրել, իսկ կոլեգիայի տարածանության դեպքում վեճը գրփում ե ժողովրդական Կոմիտարների Խորհրդի քընության:

34. Ժողովրդական Կոմիտարների և նրանց կոլեգիաները պատսօնաւու յեն ժաղովրդական Կոմիտարների Խորհրդի առաջիկ ժակ ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը - Հայաստանի Խորհուրդների Համագումարի և Կենտրոնական Գործադիրի Կոմիտեյի:

35. Բացի Հայաստանի Խորհուրդների Համագումարից, Կենտրոնական Գործադիր Կոմիտեյից և ժողովրդական Կոմիտարների Խորհրդից - վոչ մի այլ հիմնարկ կամ պաշտոնյա իրավանք չունի որենք հրատարակելու:

36. Յուրաքանչյուր ժողովրդական Կոմիտար իրավունք ունի վարույթներ ընդունել և կարգադրություններ անել միայն յուր երավագումարին վերապահված հարցերի մտախ:

Գլուխ ԶՈՐՅԱՐԴ

Հայաստանի Խորհուրդների Համագումարի յև Կենտրոնական Վարժադիր Կոմիտեյի իրավասությունը

37. Հայաստանի Խորհուրդների Համագումարի և Կենտրոնական Գործադիրի Կոմիտեյի իրավասության են յենթարկվում հետեւյալ հարցերը:

ա. Սահմանադրության հաստատումն, լրացումն ու փոփոխումը:

բ. Արտաքին և ներքին քաղաքականության ընդհանուր զեկավագումները:

շ. Հանրապետության առմանների վարչումն ու փոփոխումը, այլ և դրա մասերի, ինչպես և հանրապետության պատկանող իրավունքների ոտարացումը:

դ. Հանրապետության ընդհանուր վարչական բաժանումը:

ե. Զավերի, կշռի և դրամական սիստեմների սահմանումն ու փոփոխումը:

զ. Առար պետությանների հետ հարաբերությունների վարելը, պատերազմ հայոտարելին ու խաղաղության դաշինք կնքելը:

է. Փախառությունների, մորսի, առևտուրի և ֆինանսական հաշմածայնագրեր կնքելը:

ը. Ժողովրդական տնտեսության և նրա առանձին ճյուղերի հիմունքների ու ընդհանուր ծրագրի սահմանումը:

թ. Բյուջեյի և հարկերի ու տուրքերի սահմանումը:

ժ. Ժողովրդական Կոմիտարների և ժողովրդական Կոմիտարների Խորհրդի, այլ և ժողովրդական Կոմիտարների Խորհրդի նախագահի նշանաւկումն ու փոփոխումը:

ժա. Զինված ուժերի կազմակերպության հիմունքների սահմանումը:

ժի. Համապետական ընդհանուր սրբազրությունը՝ պատասխանական քաղաքացիական, քրիստոնեական և այլ:

ժդ. Հ. Ա. Խ. Ժ. Քաղաքացիության իրավունք ձեռք բերելու և այլ իրավունքներից զրկվելու, այլ և ոտարերկացների իրավունքների մասին ընդհանուր վարչումներ հրատարակելը:

ժդ. Ընդհանուր և մասնակի ներումն և

ժե. Ընդհանուր պատուի այն բոլոր խնդիրները, վարունք հիշատակված

հն ներկա Սահմանադրությամբ և կամ վորոնց լուծումը Հայաստանի Խորհուրդների Համագումարը և Կենտրոնական Գործադիր Կոմիտեն իրենց իրավասության յենթակա կը ճանաչեն:

38. Հայաստանի Խորհուրդների Համագումարի բացառիկ իրավասության և պատկանում Սահմանադրության հիմնական սկզբունքների հաստատումը, լրացումը և փոփոխումը:

ԴԱԻԻ ՀԻՆԳԵՐՈՌԴ

Կենտրոնական Պորժադիր Կոմիտեի Նախագահության
իրավասուրկունք

39. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը ա. Դեկավարում և Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերը: Նյութեր և նախապատրաստում Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նիստերի համար:

գ. Վերահսկում և որենքների կատարումը և Խորհրդային իշխանության հիմնարկների գործունեյությունը:

դ. Լուծումն և տալիս ինչպես կենտրոնական իշխանության, նույնական և կենտրոնական ու գավառական իշխանությունների մեջ ծագած վեճերին:

ե. Քննության և ամենում ներումն շնորհելու, կարմիր դրոշակի ուղղանշանով պարզեատրելու, այլ և բարձրագույն կառավարականության կարգով վորոշում պահանջող խնդիրները:

զ. Վճիռ և տալիս Հանրապետության վարչական և տնտեսութան վերաբերանաման նախագծերին:

է. Բնեկանում և ժողովրդական Կոմիտարների Խորհրդի գործումները և կամ առկայում, նրանց վերջնական լուծումը հանձնելով Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին:

ը. Նշանակում և պաշտոնանկ և անում Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի առաջարկությամբ կամ անմիջականորեն ժողովրդական կոմիտարներին:

ի թ. Ընդհանրապես հարաբերում և կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անունից և ի գեպ հարկի ընդունում նրա անունից համապատասխան վորոշումներ:

40. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կից կազմակերպվում են բյուջետային, իրավաբանական և այլ հանձնաժողովներ, գործնց կազմի և իրավասության հարցերը վորոշում են կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հատուկ հրահանդիներով:

41. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունները գործունեյության համար հաշվետու յե կենտրոնական Գործադիր Կոմիտեյի առաջ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Տեղական իշխանություն

42. Գյուղի և քաղաքի սահմաններում բարձր իշխանություն հանդիսանում է պատգամավորների խորհուրդը:

43. Պատգամավորների խորհուրդը՝ հրավիրվում և առնվազն ամիսը մի անգամ համապատասխան գործադիր կոմիտեյի կողմից, իսկ ուր գործադիր կոմիտե չկա—նախագահության կամ նախագահի կողմից ամիջականորեն և կամ խորհրդի վեց ավելի անգամների առաջարկությամբ:

44. Քաղաքի պատգամավորական խորհուրդները կազմվում են 500 բնակչին մեկ պատգամավորի հաշվով, իսկ զյուղականը 100 բնակչին: Քաղաքի պատգամավորական խորհուրդների անդամների թիվը լինելու յե առնվազն 25 և ամենաշատը — 300, իսկ զյուղինը՝ 3—50:

Պանորուրյուն. ա.—Սահմանադրությամբ ստանձնին պատգամավորական խորհրդի իրավունք և տրվում Յերևան և Ալեքսանդրապոլ քաղաքներին, իսկ չ. Ա. Խ. չ. մյուս քաղաքներին Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հատուկ որենսդրությամբ:

Պանորուրյուն. բ.—300-ից պակաս բնակչություն ունեցող զյուղերում կառավարական գործերը վճարվում են ընտրողների ընդհանուր ժողովի կողմից անմիջաբար և գործադրվում միանձնյա նախագահի միջացով:

45. Գավառամասի սահմաններում բարձր իշխանություն հանդիսանում է պատգամավորների խորհուրդների գավառամասային համագումարը, իսկ մի համագումարից մինչ մյուսը գավառամասային գործադիր կոմիտեն:

46. Գավառամասային գործադիր կոմիտեն ընտրվում և համապատասխան համագումարի կողմից 3—7 անդամների կազմով:

47. Գավառամասային գործադիր կոմիտեն հաշվետու յե և պատասխանատու պատգամավորների խորհրդի գավառամասային համագումարի առաջ, վորին նա հերթական նիստերի յե հրավիրում տարեկան յերկու անգամ, հարկ յեղած դեպքերում գավառամասային գործադիր կոմիտեն իր անմիջական նախածենությամբ և կամ գավառամասի վեց կազմով զյուղական խորհուրդի առաջարկությամբ հրավիրում է արտակարգ համագումար:

48. Պատգամավորների խորհրդի գավառամասային համագումարը կազմվում է զյուղական խորհուրդների ներկայացուցիչներից, ըստ վորում 500 բնակիչ տալիս և մի պատգամավոր, բայց նրանց թիվը պետք ելնի վոչ ավելի քաշ ավելի, քան 75 հոգի:

49. Գավառի սահմաններում բարձր իշխանություն հանդիսաւ և պատգամավորական Խորհուրդների գավառային համագումարը, իսկ մի համագումարից մինչ մյուսը՝ զավառային դորձողիր կոմիտեն:

50. Φωναιαγιήν φορδαηήρ կոմիտեն ընարգում և գովառացին համադումարում 7-15 անդամների թվով և հաշվետու յի սպատականատու համադումարի առաջ, զարին և հրապիրում և հերթական ժաղովի տարեկան վոչ պահան, քան յերկու անդամ, իսկ արտակարգ գեղքերում նաև ավելի անմիջականորեն և կամ քաղաքացին խորհուրդների և պատգամափորների խորհուրդների դաշտամասային համադումարների պահանջով, յեթե նրանք բնդութեամբ են գավառի ազգաբնակության 1/5-ից ավելին:

51. Պատգամավորների խորհուրդների գավառային համագումարը կազմվում է խորհուրդների գավառամասային համագումարների և քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից, լաւ գործում գյուղի 1,000 բնակչից ընտրվում է մի պատգամավոր, իսկ քաղաքի 200 բնակչից մի պատգամավոր, սակայն ընդհանուր թվով վաշ ամենի, քան 250 հոգի:

52. Հայտաստանի Խորհուրդների Համագումարը, վոր հանդիսանում է Հ. Ա. Խ. Հ բարձրագույն իշխանությունը, կազմվում է խորհուրդների գավառաշին համագումարների պատգամավորներից, ըստ փորում 5,000 հոգուց ընտրվում է մի պատգամագոր, սակայն Հայտաստանի Համագումարի պատղամավորների բնորհանուր թիվը լինելու յե վոչ ավելի, քան 300 հոգի:

53. Խորհուրդների վերընարակթյունը պիտի կատարվի զյուղերում տարեկան յերկու անգամ, իսկ քաղաքներում տարեկան մեկ անգամ, մեջնովով բարձր գործադիր կամիակցին վերապահելով այդ վերընարակթյունները կատարել ափելի շոււա:

54. Խորհուրդների մի ժողովից մինչ մյուսը և խորհուրդների մի համագումարից մինչ մյուսը ավալ յերկրամասի բարձր իշխանությունը հանդիսանում է համագուտասարման գործադիր կոմիտեն, վարք պատասխանատու յե ինչպես իրեն ընտրող խորհրդի, կամ խորհուրդների համագումարի, նույնպես և բարձրադիր գործադիր կոմիտեյի, Ժողովրդական Կոմիտարների խորհրդի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի առաջ:

55. Տեղական խորհուրդների, նրանց համագումարների և զոր-ձագիր կամբակեների և այլն գործառնություններն են՝

ա. Տվյալ յերկրամասի սահմաններում՝ խորհրդային տմբողջ գործունեցության միացումը:

բ. Զուտ տեղական նշանակություն ունեցող բոլոր ինդիվիւդների
ինքնորհն լուծումը:

գ. Համապատասխան յերկըամառը կուլտուրապիս և անտեսապիս բարձրացնելու բոլոր միջոցների գործադրությունը:

գ. Խորհրդային իշխանության համապատասխան մաքսիների բոլոր վճիռների կենսագործումը և այն:

56. Խորհրդային խմբանության մարմիններին հանձնարարված խնդիրների լուծման համար խորհուրդներին և զործագիր կոմիտեներին կից կազմակերպվում են համապատասխան բաժանմունքներ վարիչների գլխավորությամբ:

Ծանոթաբանութեան Գործադիր կոմիտեի վօրոշմամբ պարհածն է հաստատվել նաև կողեզրա:

57. Յոդ, 55-ում հիշատակված բաժանմունքներն ու նըսանց պաշտանավարական կարգը սահմանում ե կենտրոնական Գործադրիք կոմիտեն հատուկ որենսդրությամբ:

58. Բաժանմունքի վարիչը կարող է գործադիր կոմիտեի անդամ՝ չլինել:

Համապատասխան ժողովրդական կոմիսարը կարող է բացարձի գործադիր կոմիտեյի կողմից նշանակված և անմիջապես իրեն յենթակա վարիչնու Տարածայնության գելքում հարցը լուծում ե կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահությունը:

59. Բաժանմանքի գործունեյությունը, այլ և կենտրոնական եշխանության կարգադրությունները ձիշտ և ժամանակին կատարելու համար պատասխանառու յեն թե բաժանմունքի վարիչը և թե գործադիր կոմիտեն, վորի վարիչը պարբերաբար զեկույց ու հաշիվ և ներկայանում իր գործունեյության մասին:

60 Բաժանմունքի վարիչը իրավազոր և միանձնյա վճռել բա-
լոր ինդիբները, տեղեկացնելով այդ մասին կոլեգիային։ Վարիչի
այս կամ այն վճռին չհամաձայնելու գեպքում կոլեգիան չի առ-
կայում վճռի կատարումը, այլ բողոքարկում և զործագիր կոմի-
տեյի տուած։

61. Բաժանմունքները անմիջապես ստորագիր են ավյալ գործադպիր կոմիտեյին և պարտավոր են կատարել ինչպես վերջինիս, նույնպես և ավելի բարձրագիր գործադպիր կոմիտեների համապատասխան ռաժանամունքի, այլ և պատշաճ ժողովրդական կոմիտեների բոլոր հրամաններն ու կարգադրությունները:

62. Յեթե գործադիր կոմիտեյի բաժանմունքը սնիրազործելի յե գանում ավելի բարձրագիր գործադիր կոմիտեյի ու նրա բաժանմունքի և կամ Փողովրդական կոմիսարիատի կարգադրությունը, ըարտավոր և անհաղաղ տեղեկացնել այդ մասին ավյալ գործա-

գիր կոմիտեյին, վորը սակայն առանց այդ կարգագրության կտարումն առկայելու, իր խորհրդածությունները կարգադրությունը բեկանելու մասին ներկայացնում է կարգադրությունն անող բարձրադիր գործադիր կոմիտեյին կամ ժողովրդական կոմիսարիատին, հայտնելով այդ մասին միաժամանակ նայե Կենտրոնական Գործադիր կոմիտեյին և ժողովրդական կոմիսարների Խորհրդին:

63. Ժողովրդական կոմիսարիատներն և գործադիր կոմիտեներն ու իրենց բաժանմունքների պատշաճ կարգադրություններն անում են ստորագիր կոմիտեների բաժանմունքներին և հատուկ կարեւորություն ունեցեղ կարգադրությունների մասին միաժամանակ տեղեկացնում են գործադիր կոմիտեյին, վորը հետամուտ և լինում գրանց ժամանակին և ճիշտ ի կատար ածելուն:

64. Ժողովրդական կոմիսարիատներն և բարձրադիր գործադիր կոմիտեներն ու իրենց բաժանմունքներն իրավունք ունին անմիջաբար հարաբերվել ստորին գործադիր կոմիտեյի և իր բաժանմունքի հետ, զանց առնելով մեջընդող ինստանցիաները, պարտավոր լինելով սակայն միաժամանակ տեղեկացնել այդ ինստանցիաները:

65. Գործադիր կոմիտեներն ու նրանց բաժանմունքները հարաբերվում են բարձրագույն գործադիր կոմիտեների ու նրանց բաժանմունքների, նմանապես ժողովրդական կոմիսարիատների հետ անմիջականորեն բարձր կանգնած համապատասխան ինստանցիաների միջոցով, սակայն դա նրանց չի զրկում անհրաժեշտության գեպօրում ավելի բարձր կանգնած մեջընդող որդանների հետ անմիջաբար հարաբերվելու իրավունքից:

66. Ժողովրդական կոմիսարների կարգադրություններ պարտադիր են տեղական գործադիր կոմիտեների համար, իսկ յեթե նրանք այդ կարգադրությունները զանում են ապօրինի կամ անհամատականարմար, բողոքում են այդ մասին ժողովրդական կոմիտարների Խորհրդին և Կենտրոնական Գործադիր կոմիտեյին, սակայն առանց դադարեցնելու կարգադրության կատարումը Տեղական գործադիր կոմիտեները միայն բացառիկ գեպօրում կարող են չկատարել այդ կարգադրությունները, այն ել միաժամ վորոշումով և յուրաքանչյուր անգամի անձնական դատական պատասխանատվությունը:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Խորհուրդների ու խորհուրդների համագումարների պատգամավորների լով գործադիր կոմիտեների անդամների պարտականությունները

67. Խորհուրդների ու խորհուրդների համագումարների պատ-

գամավորները և գործադիր կոմիտեների անդամները պարտական են:

ա. Հաճախել ժողովները և մասնակցել նիստերին:

բ. Աշխատել հանձնաժողովներում և բաժանմունքներում:

գ. Կատարել համապատասխան ժողովների և նախագահությունների հանձնաբարությունները:

դ. Տալ պարբերաբար հաշվետվություն իրանց և իրանց անդամակցած որդանի գործունեցության մասին:

և ե. Ընդհանրապես անշեղ կատարել որենսդրությամբ նախատեսնված և կամ սույն հոգվածի գ. կետում հիշված հիմարկեների բոլոր պատշաճ վորոշումները:

68. Նախընթաց հոգվածում հիշատակված պատգամավորներն ու անդամները պարտավոր են կատարել այն բոլոր հրահանդները և մանդամները, վոր սահմանել են նրանց ընտրող որդանները:

69. Հոդ. հոդ. 66 և 67-ում հիշատակված պարտականությունների զանցառուները բացի ընդհանուր և դիցիոլինար պատասխանառութիւնից՝ միաժամանակ զրկվում են իրենց լիազորություններից:

ՀԱՏՎԱԾ ՅԵՐՈՌԴ

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԲԱՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՅՑ

70. Բանվորների, զյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդների համար ընտրելու և ընտրվելու իրավունք ունին, անկախ ազգությունից, դաշտանաքից, նաև ակեցությունից՝ և. Ս. Խ. Հ. յերկու սեռի մինչև ընտրության որը 18 ա. լուցած հետեւյալ քաղաքացիները.

ա. Բոլոր արտագրող և հանրուգուած աշխատանքով ապրուստի միջոցներ ձեռք բերողները, այլ և նրանք, վորոնք տնային տնտեսությամբ առաջնաների համար աշխատանքի համար աշխատանքի համարվորություն են ընձեռում:

բ. Կարմիր զինվորները:

գ. Սույն հոգվածի ա. և բ. կետերում մատնանշված և աշխատունակությունը կորցրած քաղաքացիները:

71. Ընտրելու և ընտրվելու իրավունքից զորկ են, թեկող վերոհիշյալ կատեկորիաներից մեջին պատկանեն,

ա. Վարձու աշխատանք շահագործողները,

բ. Անաշխատ յեկամուտով ապրողները.

գ. Մասնավոր տոհարականները և առելորտկան միջնորդները:
դ. Կրօնավորներ և կրօնական պաշտամունքի հոգեոր սպասավորները:

է. Տապալված կառավարությունների անդամները և քաղաքական հետախուզության ու վաստիկանության պատասխանատու պաշտոնյանները, խմբավետներն ու մասուցերիսանները:

զ. Մահմանված կարգով թուլամիտ և խելակորույս ձանաշվածները, ինչպես և ինտամտկալության յենթակա անձինք:

Է. Օրենքով կամ դատավճռով իրավազրկման դատապարտածները:

72. Կենտրոնական Գործադիր կոմիտեին և վերապահվում քննչողիկ որենսդրական կարգով և հրահանգներով վարոշել ընտրությունների կարգը:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐԱՐԴ

Ընտրությունների կատարման մասին

73. Ընտրությունները կատարվում են տեղական խորհրդի կողմից նշանակված որերը:

74. Ընտրությունները կատարվում են բնարական հանձնաժողովի և տեղական խորհուրդների ներկայացուցչի տորնթերությամբ:

75. Յերբ տեխնիքական պատճառներով խորհրդի անդամի ներկայությունն անհնար է, նրան փոխարինում ե ընտրական հանձնաժողովի նախագահը, իսկ սրա բացակայության դեպքում՝ ընտրական ժողովի նախագահը:

76. Ընտրությունների ընթացքի և արդյունքի մասին կազմը վում և արձանագրություն ընտրական հանձնաժողովի անդամների և խորհրդի ներկայացուցիչների կամ ժողովի նախագահի և քարտուղարի ստորագրությամբ:

77. Ընտրությունների մանրամասն կարգը՝ կազմվում է տեղական խորհրդի կողմից՝ Հայաստանի կենտրոնական Գործադիր կոմիտեի հրահանգների համաձայն:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐԱՐԴ

Ընտրությունների սույնման, թեկանման յեվ պատճամավորների ներ կանչելու մասին

78. Ընտրության բոլոր նյութերը ուղարկվում են համապատասխան խորհրդին կամ համագումարին:

79. Խորհուրդը կամ համագումարը ստուգման համար ընտրում են մանդատային հանձնաժողով:

80. Ստուգման արդյունքի մասին մանդատային հանձնաժողովը ղեկուցում է խորհրդին կամ համագումարին:

81. Խորհուրդը կամ համագումարը վճռում են պիճելի մանդատի հաստատման ինդիքը:

82. Ընտրությունները ամբողջովին անկանոն կատարված լինելու գեղքում ընտրությունների բեկման խնդիրը վարոշվում է խորհրդային ավելի բարձր ինստանցիայի կողմից:

83. Ընտրությունների բեկման բարձրագույն վճռարեկ ինստանցիան և Հայաստանի կենտրոնական Գործադիր կոմիտեն:

84. Ընտրություններն ամեն ժամանակ իրավական իրավական ուժին յետ կանչելու իրանց ընտրած պատգամագորին և կատարելու նոր ընտրությունները ընդհանուր կանոնների համաձայն:

ՀԱՏՎԱԾ ԶՈՐՅՈՒԴ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԱԽԵԿԵՐԱՐԴ

Եյուչելի իրավունք

85. Պետական յել ու մուտքը ի մի յերեքում համապետական ընդհանուր բյուջեյում:

86. Պետական գանձարանի միջոցներից ծախքերը կատարվում են պետական բյուջեյում այդ ծախսի համար վարկ բանալով և կամ իրավասու մարմինների հատուկ վորոշմամբ:

87. Նախահաշիվերում չնախատեսված համապետական թետքական ծախսերի, նմանապես և նախահաշվով վորոշված հատկացումների անբավարության գեղքում կենտրոնական Գործադիր կոմիտեն կամ Ժողովրդական կոմիտարների Խորհուրդը լրացուցիչ վարկ են բաց ոհում՝ համբարձական ժողովրդական կոմիտարիան նախահաշվում:

ՀԱՏՎԱԾ ՀԻՆԳԵԲՈՒԴ

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒՑԵԲԵՐԱՐԴ

Հ. Ա. Խ. Հ. պետական գեր յեվ դրու

88. Հ. Ա. Խ. Հ. պետական գերը և Մեծ և Փոքր Մասիսներից վեր, ծագող տրեկակի ճառադայթների մեջ, մուգճ և մանգաղ, ստորառում խաղողի թուփ վողկույզով և տերեններով, աջից և ձափից ցորենի հասկեր, և ավելի բարձր՝ ձիթենու ձյուղեր: Գերը կը կնակի շրջագծերի արանքում արձանագրված և «Հայաստանի

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն» և «Պրոլետար-ներ բոլոր յերկրների, միացեք»:


89. Իսկ պետական գրոշն է.—

Այ կարմիր գույնի կտոր, վորի ձախ անկյունում փայտի մոտ վերևում զետեղված են վոսկե տառեր՝ Ն. Ս. Խ. Հ. կամ Հայաս-տանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Հայաստանի Բանվորների, Գյուղացիների և Կարմիր Զինվոր-ների Պատգամագորների Խորհուրդների Յ. համագումարը իր 2-ր փետրվարի 1922 թ. նիստում ընդունում է սույն Սահմանա-գրությունը (Հիմնական Որենքը):

Այս Հիմնական Որենքը գործադրվում է այս օրից, յերբ նա կը ճրատարակվի Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում: Սա պետք է ճրատարակվի խորհրդային իշխանության բոլոր տեղական թերթերում և պետք է կախվի բոլոր պետական հիմնարկություն-ներում աչքի ընկնող ։ և դ:

Հայաստանի Խորհրդային Առաջին Համագումարը հանձնա-րարում է Խուսախորության ժողովրդական Կոմիսարիատին, վոր Հայաստանի բոլոր դպրոցական հիմնարկներում, առանց բացառու-թյան, ուսուցանվեն, բացարկվեն ու մեկնաբանվեն սույն սահմա-նագրության հիմնական ինտերել:

Հայաստանի Խորհրդայինների Սույն Համագումարի Հերթական
Նախագահ՝ 
Քարտուղար՝ 

Յերեան, 2-ր փետրվարի 1922 թ.
Հր. «Խորհրդային Հայաստան», 1922 թ. Ապրիլ 23-ր № 88



ՀՀ Ազգային գրադարան



NL0219099

34.563